այդ մտայնությունը շաղկապենք այն ժամանակաշրջանի հետ, երբ արդեն սկսել են զարգանալ սեփականության գաղափարի տարրերը համայնքային տնտեսության ներքո։ Խաչի այս կապող հատկությունը կարող է որոշ լույս սփռել մի այլ բարդ երևույթի վրա, այն է, որ թե՛ Զանգեզուրում և թե՛ այլ հայաբնակ գավառներում սրբավայրերը, ուխտատեղիները, որոնց վերագրվում է չարիքից պաշտպանելու զորություն՝ խաչ բառով անվանելը։ Այդ զորությանն են դիմում և՛ հիվանդության, և՛ անհաջողության դեպքերում, կամ հիվանդությունն ու անհաջողությունը կանխելու նպատակով։ Այդ վայրերում բուսած ծառերից ոչ մի ճյուղ չպիտի կտրվեր, գուցե միայն այդտեղ մորթվող մատաղի կրակի համար։

Այդտեղ մորթվող մատաղի համար չպետք է վերցնեին այդտեղ դրված ճրագները, նվերները, նույնիսկ որևէ քար։ Այս ամենը արգելքի՝ տաբուի էր ենթարկված։ Այդ է արտահայտում խաչ դարձվածքը։ Այդ նշանակությունը հնում անշուշտ տրվում էր այնպիսի վայրերին, որոնք հունարեն կոչվում էին ἱερὸν ἄσυλον — սրբազան ապաստարան։ Այդ բառը մտել է և այլ լեզուների մեջ, այսինքն՝ գողանալուց, հափշտակվելուց, կողոպտվելուց պաշտպանված վայր՝ συλάω — գողանում եմ, խլում եմ, հափշտակում եմ, կողոպտում եմ, միջից հանում եմ, մերկացնում եմ։ Այս բացատրության ուղղությամբ կատարվելիք հետազոտությունները կարող են լույս սփռել նախնական մտածողության և կյանքի մի շարք կարևոր կողմերի վրա։

Զանգեզուրի հայերի մեջ մինչև վերջին ժամանակները քաշկէրի մասին պահպանվող ըմբռնումները մնացորդ են շատ վաղեմի հասարակարգից եկող աշխարհայացքների, որը դեռ չէր կրում զրադաշտական կրոնի համեմատաբար ավելի ուշ հասարակական զարգացման փուլի պատկերավորումների ազդեցության հետքեր։ Քաշկէրն անմիջականորեն ոչ մի կապ չունեն Ահրիմանին շրջապատող դիվանի հետ։ Քաշկէրի կերպարները ստեղծված էին անկախ իրանական զրադաշտական կրոնից և նրանից շատ ավելի վաղ՝ տեղական ժողովրդական աշխարհայեցողության, նրա հավատալիքների ներքո։ Առայժմ դեռ դժվար է այդ ըմբռնումների մեջ անջատել՝

ա. ուրարտական հոգևոր կուլտուրայի ժառանգության վերապրուկները.

բ. այն հավելյալ ներմուծումների վերապրուկները, որոնք թափանցել են հայկական լեռնաշխարհը երկրորդ էթնիկ շերտից հնդեվրոպացիների ներգաղթից հետո, ինչպես և

գ. հին տեղական բնակչության շերտի վերապրուկները, քանի որ այդ երեք շերտերը և նրանց հոգևոր ժառանգության վերապրուկները միաձուլվել էին իրար։

ՀՄԱՅԻԼՆԵՐ, ՄԱԳԻԿ ՄՏԱՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԾԻՍԱՅԻՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերը ասված էր, որ ածուխը, աղը, հացը, մաղը, երկաթը, խաչը ստացել էին արդեն մագիկ զորություն։ Դրանք գործ էին դրվում առավելապես քաշկէրի չարագործություններից հեռու մնալու համար, այսինքն՝ ունեին գլխավորապես վանողական բնույթ։ Բացի քաշկէրից՝ ըստ զանգեզուրցի հայի համոզման, կային նաև մարդիկ, օժտված հատուկ զորությամբ, որը որոշ դեպ-